Հայեաց յերկիր և ցնլուցուն անդունդք փառաց Գեստականիդ ,
Մի ևեթ արա ակնարկ և վրէժ անուանդ. եղցէ 'ի յանդ .
Զի եթէ դու ես զօրավիգն՝ ով ժըպրհեսցի իշխել ընդդէմ.
Ջայն 'ի յերկնից ծաւալեցաւ . տեառնահաճոյ է սուրբ Նուէրն .
Դաշտք Արտազու , յաւէժ վըկայք լերուք փառացն աստուածայնոց .
Եւ դու կամար հաշտից Ներկեալ 'ի սուրբ արիւն Վարդանանց՝
Մեզ լուսափայլ պայծառացիր յաւիտենից այսր 'ի խաւար ։

Ե. Ա. Թ.

ՇԷՔՍՊԻՐ

ՄԱԿԲԵԹ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ[1]

ՀԱՆԴԷՍ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

Ինվեռնէս. — Գաւիթ ի Դղեկին:

Մտանեն Բանքոյ և Փլէանդէ , յառաջելով Սպասաւորի ջահ ի ձեռին ։

Բանքոյ

Մանուկ , որ պահ է գիշերոյս ։

Փլէանդէ

Իմուտ լուսինն , ոչ լուայ զժամն ։

Բանքոյ

Լուսինըն մըտանէ ըզհասարակ գիշերաւ ։

Փլէանդէ

Կարծեմ, տէր , թէ անագան ևս իցէ ։

Բանքոյ (Առ Սպասաւորն) .

Կալ , առ զսուրն իմ։ —.
Ագահեն մեզ երկինք . շիջեալք են բնաւ լոյսք նոցին ։ —

1 Տես Դ Պրակ , յէջ 339։

digitised by A.R.A.R.@

Կալ և զայս ։ — Ի վերայ իմ իբրև կապար ծանրանայ
Թանձըր քուն, և սակայն չկամիմ ի քուն մըտանել ։
Զօրութիւնք երկնից գըթածք, փարատեցէք ի մտացս
Ըզխորհուրդըս չարիմացըս՝ զոր ընութիւն բերէ ի քուն ։ —
(Մտանէ Մակբեթ Սպասաւորաւ որ կրէ ջահ ի ձեռին) ։
Տուր ինձ ըզսուսերն իմ ։ — Ո՞ իցէ անդ ։

Մակբեթ

Մտերիմ ոք ։

Բանքոյ

Եւ զի՞նչ իցէ այս, տէր, դեռ ո՞չ հանգեար ի քուն ․ Նընջէ արքայ ։
Քան զսովորն էր նա զըւարթ ․ մեծապարգև մեծարեաց
Ըզծառայս քո ։ Եւ զադամանդս այս առաքէ տիկնոջ քում,
Ողջունեալ ըզնա յանուն քաղցրահամբոյր վանատուի ․
Եւ համբուն գոհ՝ մեկնեցաւ ։

Մակբեթ

Յանպատրաստի գոլով մեր՝
Յօժարութիւն մեր ի հարկէն ներգևեցաւ, ապա թէ ոչ՝
Գործէաք այլազգագոյն ։

Բանքոյ

Բարւոք եղև ամենայն ։ —
Յերազեցայ զերեսին քորս բախտին յանցեալ գիշերի,
Որոց բանքն ըզքէն թըւին ոչ ի դերև ելանել ։

Մակբեթ

Ոչ ես խորհիմ ըզնոցանէ ։ Այլ երբ գըտցուք ժամ դիպող,
Քաղցր է ինձ, թէ հաճեսցիս, ժամ մի խօսել զիրացս այս ։

Բանքոյ

Որպէս կամիդ ։

Մակբեթ

Թէ կամեսցիս միաբանել ընդ խորհուրդս իմ՝
Յելանել նոցին ի գլուխ՝ հասանիցէ քեզ պատիւ ։

digitised by A.R.A.R.@

Բանքոյ

Միայն թէ մի կորուսից զիմն՝ առաւելուլ տենչալով,
Եւ զսիրտ իմ աղատ՝ և սուրբ զհաւատս առ տէրն իմ պահեցից։
Ապա զիմայց ի կամքս քո։

Մակբեր

Իսկ արդ բարի՛ քեզ գիշեր։

Բանքոյ

Շնորհակալ լինիմ քեզ, տէր, և ընդոյն զայն մաղթեմ քեզ։
(Ելանեն Բանքոյ և Փլեանդէ)։

Մակբեր (Առ Սպասաւոր)

Ե՛րթ, ասա տիկնոջ քում, առնել ինձ ազդ զանգակաւ
Յորժամ պատրաստ իցէ՝ մկելին իմ. ապա գնա՛ ի նընջել։ — (Ելանէ Սպասաւորն)։
Մինթէ դաշնն է զոր հանդէպ իմ տեսանեմ, որոյ դաստ
Շըրջեալ կայ յիմ ձեռքն կոյս։ Օ՜ն, եկ զի բուռն գքէն հարից։
Զեմուտ ի ձեռս իմ ինչ, սակայն ես ըզքեզ յար տեսանեմ։
Է՞ր, տեսիլ աղիտաւոր, ոչ ազդիցես չօշափելեաց
Որպէս աչաց։ Կամ թէ ստեղծուած մրտաց դաշնն իցես լոկ,
Սուտ երկունք ցնորեալ ուղղոյ։ Դեռ ևս ըզքեզ տեսանեմ
Քաջ ազդելի իմն ձևով, իբր այն զոր արդ մերկանամ։
Ցուցանես դու ինձ զուղին, ընդ որ հարկ է ինձ երթալ. —
Եւ զայսպիսի էր ինձ արժան գործի ի կիր արկանել։ —
Կամ այլոց ըզգայութեանց կացին աչք իմ խաղալիկ,
Կամ թէ իմ աչք զամենեքումք միահամուռ գլեն զնոքաք։
Ցեսանեմ ես ըզքեզ միշտ, յերախակալդ և ի սայր
Շիթս արեան՝ որ նախ չէին։ — Զէ և չէ ինչ ճշմարիտ.
Այլ խորհուրդք իմ արիւնուշտք են, որ այսպէս յաչս իմ յայտնեն։ —
Այժմ ի վերայ կէս աշխարհի՝ թրուի բնութիւն անկենդան.
Եւ երագք անդոհականք պատրեն ըզքունն ընդ սրահակաք։
Այժմ վըհուկք նուիրեն ըզքոհս իւրեանց տրժգոյն Հեկատեայ.
Եւ ծիւրեաքն ըսպանութիւն՝ ըզդաստ եղեալ ի գայլոյ
Ցիւր պահնակէ, ոյր կաղկանձիւն ձայն ազդարար է նըմին,
Գաղտաղնաց ծածկեալ ըզքայլս, իբր առևանկըն Տարկուինոս,
Ցառաջ խաղայ որպէս ըստուեր ի կատարումն գործոյն։ —
Ո՛վ երկիր տրամ և անշարժ, լիցիր դու խուլ առ ոտս իմ,
Ցոմ ուրեք և երթիցեն, զի մի և վէմք պատմեսցեն

digitised by A.R.A.R.@

Ո՞ւր երթամ, և զգիշերոյն նուաղեսցեն արհաւիրս
Որ նըմին յոյժ 'ի դէպ գայ ։ — Մինչ ըսպառնամ ես, կեայ նա ։ —
Ցըրտաբան շունչ խօսից սառուցանէ զարարուածն ։ — (Հնչէ զանգակ ։)
Երթամ. յետ սակաւուց կատարեսցի ամենայն ։
Զանգակս այս տայ ինձ նըշան ։ Դու մի՛ լսեր զայն, ո՛վ Դունկան,
Զի հընչիւնս այս կոչէ ըզքեզ յերկինս կամ 'ի դժոխս ։ (Ելանէ ։)

ՏԵՍԻԼ Բ

Նոյն։

Մտանէ Տիկին Մակբեթ ։

Տիկին Մակբեթ

Որ զնոսին արարբեցոյց՝ նոյն ձեռներէց զիս արար .
Որ շիջոյցն ըզնոսին՝ նոյն զիս վառեալ բորբոքեաց ։
Լըւիցո՛ւք ... խաղաղութիւն ։ Ահա բուիճակըն գուժեաց .
Հըսկող ժանտ, որ զօրըդաւորըն տայ զողջոյն գիշերոյ ։ —
Մակբեթ ձեռն 'ի գործ առնէ . բաց են դըրունքն, և ծառայք
Ի գինւոյ զեղխեալք զպաշտօնս իւրեանց հենգնեն խորդալով ։
Ի բաժակըս նոցին ես այնպիսի դեղ խառնեցի,
Զի բնութիւն և մահ 'ի վէճ գան ընդ իրեարս թէ կեցցե՞ն
Եթէ արդեօք մեռցին նոքա ։

Մակբեթ (ի ներքուստ)

Ո՞վ իցէ անդ ։ ո՛ այր դու ։

Տիկին Մակբեթ

Եղո՜ւկ, խիթամ թէ զարթիցեն, և ոչ ի գլուխ ելցէ իրն ։
Ոչ գործն, այլ փորձ գործոյն կորուսանել կարէ զմեզ ։ —
Լըւիցո՛ւք ... Այնպէս կարգեալ էր իմ զդաշոյնըս նոցին,
Զի անշուշտ գըտանէր զայնս ։ — Եթէ արքայն ի քուն իւր
Ոչ իմում նըմանէր հօր, ես ինքն ըզգործն առնէի ։ —
Տէ՛ր իմ ։ (Մտանէ Մակբեթ) ։

Մակբեթ

կատարեցի ։ — Շըշո՞ւկ ինչ ո՞չ լըւար դու ։

Տիկին Մակբեթ

Լըւայ ըզճիչ բըւոյ, և ըզհըծծիւն ծըղըրըդին ։
Դու ինքնին ո՞չ խօսեցար ։

digitised by A.R.A.R.@

Մակբեթ

Ե՞րբ։

Տիկին Մակբեթ

Այժմ։

Մակբեթ

Ցորժամ իջանէի՞։

Տիկին Մակբեթ

Այո։

Մակբեթ

Լո՜ւր ինձ. ո՞ ննջէ յերկրորդ սենեակն։

Տիկին Մակբեթ

Դոնալբան։

Մակբեթ (Ակն արկեալ 'ի ձեռս իւր)։

Ցաւագին տեսիլ։

Տիկին Մակբեթ

Բանի՛ չամբիութեան է կոչել զայդ
Տեսիլ ցաւագին։

Մակբեթ

Մին ի նոցունց ժպտէր ի քունն.
Այլ ոք գոչէր « Ի սպանութիւն », մինչև զարթնուլ երկուցն իսկ։
Կայի անդ ունկըն դընել. զաղօթս իւրեանց մըրմընջեալ
վերըստին անկան ըզքնով։

Տիկին Մակբեթ

Երկուք օթեալք են ի միասին։

Մակբեթ

Մին աղաղակ բարձեալ գոչեաց, « Աստուած ըզմեզ օրհնեսցէ ».
Եւ միւսն « Ամէն », որպէս եթէ տեսեալ ուրեմն էին զիս

digitised by A.R.A.R.@

Ձեռօքս այս արիւնազանգ, զերկիւղ նոցին ըղձալով.
Ես ոչ կարացի պատասխանի առնել « Ամէն »,
ի ձայնել անդ նոցին « Աստուած ընդ մեզ օրհնեսցէ » :

Տիկին Մակբեթ

Մի այդպէս առ կարեւոր ինչ համարիր զայդոսիկ :

Մակբեթ

Առ իմէ չեղեւ ինձ մարթ ասել « Ամէն » . ես ինքնին
Օրհնութեան ունէի պէտս, և սակայն բառս այս « Ամէն »
կառեալ մնաց ի կոկորդիս :

Տիկին Մակբեթ

Չէ պարտ այդպէս մտայոյզ
Որոճել զայդոսիկ, քանզի ծըփումն առնեն խելաց :

Մակբեթ

Թըւէր ինձ գոչցես լըսել ձայն՝ որ բառնայր աղաղակ.
« Դու մի ևս այլ նընջեսցես. Մակբեթ ըզքուն սպանանէ,
« Ըզքունն անմեղ, որ գլխառնակեալ հոգոց մեր կարժ՝ առնէ կծիկ.
« Ըզքունըն քաղցրախորժ՝ զօր ամենայն կենաց մահ.
« Լոգանք՝ յետ խիստ վաստակոց. վիրած հոգւոյ անոյշ իւղ.
« Երկրորդ կեանք բնութեան, կենաց անդ ի խընջոյս համադամ » :

Տիկին Մակբեթ

Զի՞նչ բարբանջես :

Մակբեթ

Առ տունն ողջոյն աղաղակէր ձայնն անդուլ.
« Ոչ ևս այլ քուն. Գըլամիս ըսպան ըզքուն, և յայն սակս
« կաւդոր ոչ այլ նիրհեսցէ. Մակբեթ ոչ ևս նիրհեսցէ » :

Տիկին Մակբեթ

Ու՞ ո այսպէս աղաղակէր : Ընդէր իշխանդ ազնուական,
Վատթարես զոյժ քո՝ հիւանդ խելաց ցնորիւքդ այդոքիւք : —
Երթ խընդրեա ջուր, և լուա զքիծըն որ ըզձեռսդ ամբաստանեն :
Առ ի՞նչ ոչ ի տեղիս իւրեանց թողեր ըզդաշոյնսդ.
Անդանօր ի դէպ է մնալ : Ո՛ն, երթ և տար զայդոսիկ,

digitised by A.R.A.R.@

Եւ յարիւն թաթաւեա զննջեալսն ի քուն սպասաւորս ։

Մակբեթ

Զերթամ այլ . սարսափեմ ի խորհել անդ ըզգործոյն ․
վերըստին տեսանել զայն՝ ոչ , օն և օն , յանդըգնիմ ։

Տիկին Մակբեթ

Այր տըկար և անարի . տուր ըզդաշոյնսդ այսր առ իս ։
Մըտեալքն 'ի քուն և մեռեալք՝ են լոկ պատկերք նըկարակերպք ․
Աչք մանկան եւեթ պակնուն ի նըկարեալ սատանէ ։
Եթէ դեռ հոսէ արիւն , զդէմս ծառայիցըն ներկեցից ,
Զի նոքա համարիցին եղեռնութեանն ոճրագործք ։
(Ելանէ . — Լսի բաղխիւն ի Ներքուստ) ։

Մակբեթ

Հի՞մ բաղխեն ։ Զի՞նչ ուրեմն ինձ եղև , զի չչուկ ամենայն
Զիս ահիւ պակուցանէ ։ Որպիսի՛ ձեռք են այսորիկ ․
Ի գըլխոյս զաչս իմ կորզեն ․ բոլոր ովկիան մեծ Պոսիդոնեան
Ի ձեռաց աստի իմոց ջընջել զարիւնս այս բաւիցէ ․
Ո՛չ ․ այլ ձեռքս այս մանաւանդ ըզծովս անհուն գունեսցեն ,
Եւ կկապուտակ ջուրն ի կարմիր աշխարհածով փոխեսցեն ։
(Մտանէ Տիկին Մակբեթ)։

Տիկին Մակբեթ

Ձեռք իմ են քոյոցդ 'ի գոյն , այլ զամօթի համարէի ,
Թէ էր սիրտս այսպէս սպիտակ ։ (Բաղխեն) — Լըսեմ զբաղխիւն դրանն հարաւոյ ։
Մեկնեսցուք ի յարկըս մեր ․ փոքըր մի ջուր լուասցէ զմեզ
Ի գործոյս ․ տես զի՛ դիւրին ։ Պընդութիւն քո զքեզ եթող ։ (Անդրէն բաղխեն) ։
Լըսե՞ս , դարձեալ բաղխեն ։ Զցայգանոցն արկ ըզքեւ հանդերձ ,
Զի մի՛ գուցէ կոչեցեալք՝ բերցուք դէմս այնց որք չեն նիրհեալք ։
Մի՛ ուրեմն հիքաբար կար թափառիր ի խորհուրդս ։

Մակբեթ

Գիտեմ զիմ գործ ․ կամէի ոչ ևս այլ զանձն իմ ճանաչել ։ (Բաղխեն) ։
Զարթի՛ր Դունկան ըստէպ բաղխմամբս ․ ո՛ տայր թէ այսպէս լինէր ։

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԻԼ Գ

Նոյն:

Մտանէ Դռնապան ոք. Բաղխեն ի ներքուստ.

Դռնապան

Արդարև այս խիստ է բաղխումն. եթէ կացեալ էր ուրուք բարապան դժոխոց, ի վաղու ընդելացեալ էր դարձուցանել զփականսն. (Բաղխեն). Բաղխեա՛, բաղխեա՛, բաղխեա՛. Ո՞վ իցէ անդ, յանուն Բէեղզեբուղայ. Վարձող ոք, որ խեղդ ընդ անձն արկ՝ յետ երկար ակն ունելոյ առատ հնձոց. Ի դիպող ժամու հասեր. հոգացո՛ր թաշկինակս, քանզի աստ լիցի մեզ քաջ ընդ քիրտն մտանել. (Բաղխեն). — Բաղխեա՛, բաղխեա՛. Ո՞վ իցէ անդ, յանուն այլում սատանայի. Օ՛ն և օն, իցէ դա երկլեզու ոք, որ երդմնակուռ լեալ իցէ ընդ միումն ի նժարաց կշռոյ հակառակ միւսոյն, որ յայս մատնութիւն եկեալ իցէ վասն սիրոյն Աստուծոյ, այլ ոչ յաջողեալ խարդախել զերկինս. Մուտ, այր երկխօս. (Բաղխեն). — Բաղխեա՛, բաղխեա՛, բաղխեա՛. Ո՞վ է անդ. Է դերձակ ոմն անգղիացի, որ չորթէ ի փռանկաձև վարտեաց. Մուտ, դերձակ, մարթ է քեզ աստ շողացուցանել զերկաթ քո. (Բաղխեն). — Բաղխեա՛, բաղխեա՛, չիք և առ վայր մի դուլ և դադար. Ո՞վ իցես դու. Բայց սակայն տեղիս այս կարի իմն ցուրտ է առ ի յանդիման առնել զդժոխս. Ոչ ևս այլ կամիմ լինել դռնապան սատանայի. Եդի ի մտի մուծանել աստ ոմանս յամենայն արուեստից, արս՝ որք ընդ ճանապարհ ծաղկազուարճ երթան ի յաւիտենական հուր դժոխոց. (Բաղխեն). — Ահա գամ, ահա գամ. (Բանայ զդուռն). — Աղաչեմ զքեզ, մի՛ մոռանար զդռնապանն. (Մտանեն Մակդուֆ և Լենոքս).

Մակդուֆ

Անագան գնացեր ուրեմն ի յանկողին, բարեկամ.
Զի այսպէս տարաժամու երթաս ի քուն մտանել.

Դռնապան

Հաւատա՛ ինձ, տէր, զի զգինեաւ եկաք տակաւ մինչև ցերկրորդ հաւախօսն. և արբենալն, տէր, երից իրաց է գրգռիչ.

Մակդուֆ

Զինչ երեքն են այնոքիկ զորս արբենալն յաւէտ գրգռէ.

Դռնապան

Եհէ, տէր. կարմրութիւն քթի, քուն և մէզ. Ցանկութիւնն գրգռէ, տէր, և ոչ գրգռէ. Զարթուցանէ զփափագն, այլ արգելու զգործն. ուստի և մարթ է

digitised by A.R.A.R.@

ասել՝ եթէ կարի արբենալն նենգէ չուայտութեան։ Սա զարթուցանէ զայն և եղ-ծանէ. գրգռէ զայն և ընկճէ. ամրէ, և լքուցանէ. պահպանէ զայն և խանգա-րէ. համառօտ ասել, ի պատրանս արկանէ զայն 'ի քուն, և ստեալ այնմ ան-պատկառաբար՝ թողու լքանէ։

Մակդուֆ

կարծեմ գինւոյ քաջ ըզգըլխեալ է գքեզ յանցեալ գիշերի։

Դռնապան

Այո՛, տէր. ստեաց ինձ անպատկառաբար, այլ հատուցի նմա ըստ մատնու-թեանն. և զի քան զնա արուորագոյն էի, ըստ իմոց կարծեաց, թէպէտ և կո-բացոյց առ ժամանակ մի զծունկս, հնարեցայ թօթափել զանձն իմ ի նմանէ։

Մակդուֆ

Ցարեաւ տէր քո։ — Զարթոյց ըզնա հարուած ուռանն։ Ահա գայ։
(Մտանէ Մակբեթ)։

Լէնոս

Բարի լոյս, ազնուական տէր։

Մակբեթ

Բարի լոյս ձեզ երկոցուն։

Մակդուֆ

Իշխան արժանաւոր, յարեաւ արքայն։

Մակբեթ

Դեռ ևս ոչ։

Մակդուֆ

Պատուիրեաց զի զարթուցից ես ըզնա վաղ քաջ յայգուն։
Դժգ անցեալ է ժամադիրն ժամին։

Մակբեթ

Ածից առ նա զքեզ։

digitised by A.R.A.R.@

Մակդուֆ

Գիտեմ զի հոգս այս քեզ հաճոյ է, այլ և այնպէս հոգ է։

Մակբեթ

Աշխատանք հաճոյականք՝ ներողութեանցն են անդորրիչք։
Ահա դուռնն։

Մակդուֆ

Իշխեմ կոչել ըզնա, զի այս գործ է իմ։ (Ելանէ)։

Լէնոս

Թագաւորն այսօր մեկնի՞։

Մակբեթ

Այո՛, այսպէս կարգեաց նա։

Լէնոս

Բազմադէպ եղև գիշերըս. ծխահանք սենեկացն
Ցորս անկեալ կայաք ի քուն՝ փլուզեալ անկան ի հողմոյ.
Եւ ձայնք հառաչանաց, ասեն, լսելի եղեն յօդս.
Նորանշան ճիչ գուժ մահու. գուշակութիւնք շըրջըրջմանց
Ի բարբառ ահագնալուր. և խռովայոյզ պատահարք
Այն ինչ նոր ի վեր բուսեալք ի չարաշուք ժամանակիս։
Թըռչունըն խաւարին զգիշերն ի բուն յողբ ճըչէր։
Ասեն ոմանք՝ զի և երկիր ջերմնասարսուռ դողացաւ։

Մակբեթ

Դըժընդակ եղև գիշերս։

Լէնոս

Ցերիտասարդ հասակէս
Զհաւասարըն ոչ յիշեմ։ (Մտանէ Մակդուֆ)։

Մակդուֆ

Ո՛հ արհաւիրք, արհաւիրք,
Արհաւիրք. չիք լեզու՝ չիք և սիրտ որ բաւիցէ
կարծել անգամ թող թէ բանիւ արտաբերել։

digitised by A.R.A.R.@

Մակբեթ և Լէնոս

Զի՞նչ իրք են ։

Մակդուֆ

Ոգի ժանտ ապականիչ զսոսկալին աստ գործեաց գործ ։
Սպանութիւն սեղանազերծ այրեաց զտաճար Տեառըն սուրբ ,
Եւ կորզեալ եբարձ ըզկեանսն՝ որ զայն գործէր կենդանի ։

Մակբեթ

Զի՞նչ ասես , ըզկեա՞նս ։

Լէնոս

Բանք քո ձըգէ՞ն արդեօք առ արքայ ։

Մակդուֆ

Օ՛ն , մըտէք ի սենեակն . ի տեսիլ նոր Գորգոնեայ
Կուրասցին աչք ձեր ։ — Մի՛ ևս զիս հարցանէք . դուք իսկ տեսէք ,
Դուք ինքնին խօսեցարուք ։ (Ելանեն Մակբեթ և Լէնոս) ։ Զարթի՛ք , զարթի՛ք ի քընոյ ։
Զանգակ գուժի հընչեցուցէք . ըսպանութիւն , մատնութիւն .
Թափեցէք ըզքուն , Բանքոյ , Դոնալբանոս , Մալկոլմ դու ։ —
Մերժեցէք ըզքունդ այդ մեղկ , որ սուտ պատկեր է մահու ,
Եւ եկայք նըկատել զինքն իսկ ըզմահ գըլխովին ։
Օ՛ն , արի՛ք , տեսէք պատկեր մի զահաւոր դատաստանին ։
Օ՛ն , ելէ՛ք , Մալկոլմ, Բանքոյ , իբր ի շիրմաց ձեր ծոցոյ .
Եւ խաղացէք իբր ուրուականս , խառնել զանձինս յայս արհաւիրս ։
Ըզզանգակս հընչեցուցէք ։ (Հնչիւն զանգակի) ։
(Մտանէ Տիկին Մակբեթ) ։

Տիկին Մակբեթ

Առ ի՞նչ թըմբուկդ ատելի
կոչէ զքնաւ նիրհեալս ի տան . ո՛ն , խօսեցէք , խօսեցէք ։

Մակդուֆ

Ո՛վ տիկին քաղցրահամբոյր , զոր մարթ է ինձ ասել քեզ ,
Ունկըն քո չկարէ տանել . բանիցն ի լուր մեռցի կին ։
Բանքոյ , Բանքոյ , (Մտանէ Բանքոյ) սրախողխող եղեալ է տէր մեր արքայ ։

digitised by A.R.A.R.@

Տիկին Մակբեթ

Ո՛հ աղէտք. զի՞նչ, ի տա՛ն մերում։

Բանքոյ

Աղէտք անողորմ
Ուր և է։ Աղաչեմ ըզքեզ, Մակդուփ սիրելի,
Հակառակ խօսեա՛ անձին քում, և ասա, թէ չէ ստոյգ։
(Մտանեն Մակբեթ և Լէնոս)։

Մակբեթ

Ո՛հ, եթէ՛ մեռեալ էի ժամ մի յառաջ քան զաղէտս այս,
Վըճարեալ էի ըզկեանս իմ երջանիկ և օրհնեալ։
Զ՛ի ժամէ աստի չիք ինչ ի կենցաղումս հաստատուն,
Ամենայն՝ մանկըտւոյ խաղք. փառք, ուղղութիւն մեռեալք են.
Գինւոյն կենաց սպառեալ՝ դիրտ լոկ մնայ ի յարկիս։
(Մտանեն Մալկոլմ և Դոնալբան)։

Դոնալբան

Ո՞ւմ են աղէտք։

Մակբեթ

Քեզ ինքնին, և տակաւին զանխուլ իցէ այն ի քէն։
Աղբերակնն՝ յորմէ բըղխեաց արիւն քոյին, դադարեաց.
Եկաց աղբիւրն այն։

Մակդուփ

Ըսպանեալ եղև հայր քո, տէր արքայ։

Մալկոլմ

Ո՛հ, յորո՞ց։

Լէնոս

Սենեկապանքն, որպէս թըւի, խողխողեալ են.
Ձեռք նոցուն և դէմք յարիւն էին մածեալ բովանդակ,
Որպէս և դաշոյնքն ի սնարս նոցին անջինջք դեռ կային.
Հայէին պըշուցեալ ականողեօք մոլեգին։
Ըզկեանըս մարդկան չէր արժան նոցա հաւատալ։

digitised by A.R.A.R.@

Մակբեթ

Ո՛հ, որպէս զըղջանամ ընդ զայրոյթս իմ, որ մըղեաց զիս
Սպանանել ըզնոսին ։

Մակդուֆ

Առ ի՞նչ դու զայն արարեր ։

Մակբեթ

Ո՞ւմ իցէ մարթ ի նմին ժամու լինել միտացի և խելաշուրջ,
Հանդարտ և կատաղի, անկեղծաւոր և անփոյթ ։
Սէրն ուժգին յուսահատեալ կափոյց զդանդաղ աչս իմ մըտաց ։
Աստ անկեալ կայր Դունկանոս. արծաթափայլ մորթ մարմնոյն
Ցոսկեգոյն յեռեալ արեան. և հատոյր վէրք իւր պատառեալք
Սոսկալի խրամատք բնութեան, ընդ որ մտանէին աւեր և մահ ։
Անդ էին սպանիչք ի թոյր ներկեալք գործոյն ժանտութեան,
Եւ անգութ նըրանք նոցին՝ յարեան մածեալք ցերախակալս ։
Ո՞ ունելով սիրտ սիրալիր, և ի սըրտին արութիւն
Ցայտնելոյ զեռանդ սիրէն, կարէր ըզձեռն արգելուլ ։

Տիկին Մակբեթ

Հանէք զիս աստի ի բաց ։

Մակդուֆ

Մակբեթ տիկնոջ ձեռըն տուք ։

Մալկոլմ

Ընդէ՞ր է կալ մեզ անբարբառ, որոց յաւէտ քան այլոց
Անկ է հոգ այսըր գործոյ ։

Դուձկան

Ո՛հ, զի՞նչ ունիմք ասել աստ
Ուր ձախող ճակատագիր մեր յամենայն ի ծակուց
Մարթ է զըրոհ տալ ի մեր վերայ և աճել զմեզ ըղբըռամբ ։
Օ՛ն, ի բաց գնասցուք, չև ևս հասեալ է ժամ մեր լալեաց ։

Մալկոլմ

Եւ ոչ մերկանալոյ վըշտաց մերոց սաստկութիւն ։

digitised by A.R.A.R.@

Բանքոյ

Տիկնոջն հոգ տար։ (Տանին արտաքս զՏիկինն Մակբեթ)։
Եւ յորժամ քողարկեսցուք զմերկութիւն
Ալեկոծ մարմնոյս մերոյ, ում վնասեն օդք ի պարզի,
Ի մի վայր համախմբեալք քննեսցուք զգործս արիւնառուշտ,
Մինչ ցըխորս քողախընդրեալ։ Ահ և կասկած յուզեն զմեզ։
Սակայն ես ապաւինիմ յամենազօր ձեռըն Տեառն,
Եւ այնու 'նդ. ծածուկ խորհուրդըս մատնութեան եղից մարտ։

Մակբեթ

Արարից և ես ընդնոյն։

Ամենեքին

Նոյնպէս և մեք բոլորեքին։

Մակբեթ

Երթիցուք զգեստաւորիլ ըստ պատշաճի, և ի սրահի
Միաբան ժողովիցուք։

Ամենեքին

Օրինակ զայդ արասցուք։
(Ելանեն ամենեքին, բաց ի Մաղկոլմայ և Դոնալբանայ)։

Մաղկոլմ

Զինչ առնել կամիցիս դու. սոցա կըցորդ մի՛ լիցուք։
Ցուցանել ցաւ զոր ընդգայ ոք ոչ՝ խաբուսիկ մարդոյ է գործ.
Ես յԱնգղիա երթամ։

Դոնալբանոս

Եւ ես յիռլանտա։ Բախտք մեր անջատք
Զերծ եւս լիցին։ Աստ և ի ժպիտս անգամ սուսերք դարանին։
Կըցորդ-ազգոյնն արեան, ընդնոյն երագագոյն է ի հեղուլ։

Մաղկոլմ

Նետըն ձըգեալ 'ի սպանողէն չէ 'ի նպատակն հասեալ դեռ.
Զգուշագոյն մեզ գործ լիցի խուսել փախչել յայնմանէ։
Հապա, ձի կալցուք, թողեալ ի բաց զողջոյնս հրաժեշտի.
Այլ մեկնիցուք. օրէն իմն է աւազակին ճողոպրել զանձն,
Յորժամ ոչ ևս ունիցի ակընկալլիս թողութեան։

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԻԼ Դ

Արտաքոյ քան զդղեակն :

Մտանեն Ռոսսէ և Ծեր ոմն :

Ծեր

Եօթանասուն ամս յիշեմ ես, և յայսքան ձիգ ժամանակի
Տեսի ժամս ահաւորս և իրս ահեղ նորանշանս.
Այլ դոյզն ինչ են առ այսու զարհուրագին գիշերաւ :

Ռոսսէ

Ո՛հ, բարի ծեր, տեսանես զի սրտմտեալ իմն երկինք՝
Ընդ մարդկան գործս՝ ըսպառնան արիւնըռուշտ տեսլարանս :
Ժամացոյց զայգ ցուցանէ, սակայն գիշեր խաւարչուտ
Հեղձամահ չիջուցանէ զսաղապաճեմըն լամբար :
Ցա՛յգ իշխէ, եթէ արդեօք արև չիկնի դարձ առնել,
Զի խաւար տիրապետեալ ունի զերեսըս երկրի,
Մինչդեռ լուսոյն կենաց ի դէպ էր զնա համբուրել :

Ծեր

Այդ արտաքոյ է բնութեան, որպէս և գործն որ եղև.
Բազէ մի՝ որ սլանայր յօդս, յանցեալ երեքշաբաթուոջ,
Խորխտապանծ ընդ խոյանս իւր բարձրաթռիչ հոլաթև,
Ի մըկնակեր բըւոյ անկեալ մագիլս եղև գիշատեալ :

Ռոսսէ

Եւ երիվարք Դունկանայ (նորատեսիլ իրք և ստոյգ),
Գեղեցիկքն և ճեպընթացք, յազգըս իւրեանց լաւագոյնք,
Ամեհացեալք առաթուր խորտակելով զասպաստանս,
Ընթացան պախուցաթափ, գոգ ընդ մարդկան մարտ մըղել :

Ծեր

Լըւայ և ես ասել եթէ կերան նոքա զմիմեանս :

Ռոսսէ

Ականատես այդմ և ես՝ ի պակուցումն աչաց իմոց : (Մտանէ Մակդուֆ) :
Ահաւասիկ բարին Մակդուֆ : իսկ արդ ուրեմն որպէս կան իրքն :

Մակդուֆ

Եւ դուք ո՞չ տեսանէք :

Ռոսսէ

Ե՞կն յերևան ոճրագործն :

digitised by A.R.A.R.@

Մակդուֆ

Նոքին իսկ են զոր սպան Մակբեթ

Ռոսսէ

Օ՛ր չար · զոքա զի՞ խնդրէին ։

Մակդուֆ

Հրապուրեալ էին նոքա ։ Դոնալբանոս և Մալկոլմ,
Երկու որդիք արքային, անհետ եղեն և փախեան,
Եւ այս գործ ըզնոսա կասկածելիս իմն առնէ ։

Ռոսսէ

Ահա և այդ գործ ընդդէմ բնութեան ։ Շռայլ գոռոզութիւն,
Որ յառաջ քան ըզդէպ ժամ սպառեալ ծախէ զբարիս իւր ։ —
Թէ այդպէս իցէ, թըւի եթէ Մակբեթ ելցէ ի գահ ։

Մակդուֆ

Արդէն ի նոյն հրաւիրեցաւ, և թագ կապել գնաց ի Սկոնէ ։

Ռոսսէ

Ո՞ւր է մարմին Դունկանայ ։

Մակդուֆ

Տարեալ եղև ի Կոլմէքիլ,
Ի տեղին սուրբ՝ ուր ոսկերք իւրոց նախնեաց պահեալք կան ։

Ռոսսէ

Երթա՞ս և դու ի Սկոնէ ։

Մակդուֆ

Ոչ, քեռորդի, այլ ի Ֆիֆէ ։

Ռոսսէ

Քաջ է. այլ ես գնացից ։

Մակդուֆ

Իցէ՜ և զիրսն յաջող տեսանէիր ։ —
Ողջամբ մնա ։ Եւ կարծեմ եթէ հնոտի ըզգեստք մեր
Քան ըզնորս իցեն հեշտինք ։

Ռոսսէ (Առ Ծերն)

Ողջ մընասջիր, այր բարի ։

Ծեր

Օրհնութիւնք երկնից ընդ ձեզ, և 'նդ այնոսիկ որ ջանասցին
Ի բարի փոխել ըզչարն և զթըշնամիս ի բարեկամս ։ (Ելանեն) ։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՍԻՆ

Կը շարունակուի

digitised by A.R.A.R.@